

Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ԲԵՄԱԿԱՆՔ

Ուր. 1 Մարտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 2 Մարտ.- Ս. Ասրգսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Ասրգսի մատրան մէջ: Ժամարարն էր Ս. Բագրատ Արդ. Պուրնէֆեան:

Ըստ սովորութեան կատարուեցաւ Հոգեհանգստեան պաշտօն, հանգուցեալ ազգային բարերար Գալուստ Պէյ Կիւլպէնկեանի եւ ծնողաց՝ Սարգսի եւ Տիրուհւոյ եւ գերդաստանի ննջեցելոց հոգիներուն համար նախագահութեամբ Պատրիարք Սրբազան հօր:

Կիր. 3 Մարտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Կարապետի խորանին վրայ: Ժամարարն էր Ս. Իսահակ Արդ. Մինասեան:

Շր. 9 Մարտ.- Արքայն Իսահակայ Պաթբեի Հայրապետին մերոյ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ս. Ղեւոնդ Արդ. Յովհաննիսեան:

Կիր. 10 Մարտ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը: Ժամարարն էր Բարդուղէն էր Ս. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան:

Դշ. 13 Մարտ.- Նախատեսակին ի Ս. Յակոբ նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Եշ. 14 Մարտ.- Ս. Վարդանանց Զօրավարացն Մերոց 1036 վկայիցն: Յիշատակ Մեռելոց եւ Տօն Ագայիցն:

- Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց եւ ֆարոգեց Ժառանգաւորաց վարժարանի Տեսուչ Ս. Պարէտ Ծ. Վրդ. Երէցեան: Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի անուան տօնին առթիւ կատարուած «Հայրապետական Մաղթանք»ին եւ հոգեհանգստեան կարգին:

Ուր. 15 Մարտ.- Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ Ասորւոց Ս. Մարկոս Աւետարանիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան որ նաեւ ֆարոգեց: Ժամարարն էր Ս. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան: Միաբանութիւնը հիւրասիրուեցաւ Ասորւոց կողմէն:

Շր. 16 Մարտ.- Կ. Պոլսոյ Ս. Ժողովոյն Հարիւր Յիսուս Հայրապետացն: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Ս. Գուսան Վրդ. Ալեանեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարի Աւագ Խորանը, սեղանները ու գլխաւոր սրբանկարները, Համարածի շարականը երգուած ժամանակ վարագուրուեցան Պատրիարք Սրբազան Հօր, Գերաշնորհ եւ Հոգեշնորհ Հայրերու ձեռնով:

Կիր. 17 Մարտ.- Բուն Բաքեկեզան: Փակեալ Խորանի Ս. Պատարագը Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատուց Ս. Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան: Դպրապետի պաշտօնը վարեց Լուսարարապետ Սրբազան Հայրը: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Դշ. 20 Մարտ.- Սկիզբն Կարգաց Մեծի Պահոց: Առաւօտեան Մայր Տաճարին մէջ տեղի ունեցաւ «Արեւազալ»ի առաջին, իսկ կէսօրէ ետք «Խաղաղական»ի առաջին ժամերգութիւնը:

Եշ. 21 Մարտ.- Մեծ Պահոց առաջին հսկումին ի Ս. Յակոբ ֆարոգեց Պատրիարք Սրբազան Հայրը:

Ուր. 22 Մարտ.- Նախատեսակը պաշտուեցաւ Մայրավանքի Ս. Թորոս եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շր. 23 Մարտ.- Արքայն Թեոփոսի Զօրավարին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Թորոս: Ժամարարն էր Ս. Աւետիս Արդ. Իփրանեան:

- Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան ժամերգութիւնն ու նախատեսակը, ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութիւն: Թափօրապետն էր Ս. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Կիր. 24 Մարտ.- Քառանորդաց: Արտաւանան: Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Յարութիւն մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Ս. Արիս Եպս. Շիրվանեան: Ժամարարն էր Ս. Նորայր Արդ. Գազազեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Ս. Վանիկ Վրդ. Մանկասարեան: Կատարուեցաւ մեծահանդէս եռադարձ Բափօր

Քրիստոսի Գերեզմանին եւ մէկ անգամ Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Գշ. 26 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Եշ. 28 Մարտ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ փարոզեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

Շր. 30 Մարտ.- Ս. Կիւրղի Երեսագլխաւորէն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Կիւրղի Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Թեոդորոս Արդ. Զաւարեան:

Կիր. 31 Մարտ.- Քառասներորդաց: Անանակին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան: «Հայր Մեր»էն առաջ փարոզեց Լուսարարապետ Սրբազանը: Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ մասնաւոր հոգեհանգստեան պաշտօն, Ս. Աթոռոյս երկարամեայ Միաբան Տ. Վաղարշ Եպս. Խաչատուրեանի մահուան ֆառասունհին առիթով, հանդիսապետութեամբ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի, որ կրկնուեցաւ հանգուցեալ Սրբազանին շիրիմին առջեւ: Հոգեհոգին ժառանգաւորաց Վարժարանի եւ Ընծայարանի փոքր սրահին մէջ:

Գշ. 2 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան, փարոզիչն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Եշ. 4 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Ուր. 5 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 6 Ապրիլ.- Ս. Գրիգոր Լուսաւորէին Մուտն ի Վիքրապն: Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի աւանդատան Ս. Լուսաւորիչ սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Իսահակ Արդ. Մինասեան:

Կիր. 7 Ապրիլ.- Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի ձախակողմեան դասին մէջ գտնուող Ս. Աստուածածնայ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Ընծանուէր Արդ. Բարսիսանեան: «Հայր Մեր»էն առաջ փարոզեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Գշ. 9 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Եշ. 11 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Սեւան Եպս. Ղարիպեան:

Ուր. 12 Ապրիլ.- Իրիկնադէմին, յաջորդ օրուան Քառասուն Մանկանց տօնին առիթով Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ կատարուեցաւ հսկման մասնաւոր արարողութիւն: Հանդիսապետը եւ փարոզիչն էր Տ. Բագրատ Արդ. Պուրնէճեան:

Ապա Տ. Գուսան Վրդ. Այնանեան մի ֆանի ժառանգաւորաց սաներով միասին Քառասուն Մանկանց նկարին առջեւ կարգաւորուած սեղանին դիմաց ծուկի գալով երգեցին օրուան տօնին յատուկ շարականը:

Շր. 13 Ապրիլ.- Սրբաց Մանկանցն Քառասնից Որք ի Սեբաստիա կատարեցան:

Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Կոմիտաս Վրդ. Շէրպէթեան:

Վերաբերումը կատարուեցաւ Քառասուն Մանկանց նկարին առջեւ շտկուած Սեղանին վրայէն, որուն դիմացը Կաթսայի մէջ կը պլպլային ֆառասուն գոյնգոյն կանթեղներ, աւանդական սառցապատ լիճը խորհրդանշող:

- Կէսօրէ ետք, Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր Ս. Գերեզմանի եւ Գիւտ խաչի այրին ուխտեղէն ետք, վերջնոյս կից՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ պաշտուեցան ժամերգութիւն եւ նախատօնակ:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Վանիկ Վրդ. Մանկասարեան:

Կիր. 14 Ապրիլ.- Քառասներորդաց: Դատաւորին: Գիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ: Հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Ղարիպեան: Լուսարարապետ Սրբազանին երկրորդ մուտքէն յետոյ, Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ Ս. Պատարագը մատուցեց եւ փարոզեց Լուսարարապետ Սրբազանը:

Լուսարարապետ Սրբազանը նախագահեց Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղւոյն շուրջ կատարուած եռադարձ մեծահանդէս թափօրին, որ աւարտեցաւ Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ:

Գշ. 16 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ փարոզեց Տ. Էմմանուէլ Արդ. Աբաջանեան:

ԵՂ. 18 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Դուսան Վրդ. Այնանեան:

Ուր. 19 Ապրիլ.- Նախատօնակին ի Ս. Յակոբ հանդիսապետն էր Տ. Սեւան Եպս. Դարիպեան:

Շր. 20 Ապրիլ.- Աւետումն Ս. Աստուածածնի: Առաւօտուն, Տ. Սեւան Եպս. Դարիպեանի գլխաւորութեամբ Միաբանութիւնը ինքնաշարժերով իջաւ դէպի Գեթսեմանիի ձորը եւ «Հրաշափառ»ով մուտք գործեցին Ս. Աստուածածնայ Տաճար: Տ. Սամուէլ Մ. Վրդ. Աղոյեան Ս. Պատարագը մատուցց Տիրամօր Ս. Գերեզմանին վրայ:

Կիր. 21 Ապրիլ.- Քառասներորդաց: Գալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Հրեշտակապետաց: Ժամարարն էր Տ. Էմմանուէլ Արդ. Աթաքանեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Տ. Ընծանուէր Արդ. Բարսիսանեան:

ԴՂ. 23 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Հրեշտակապետաց հանդիսապետեց եւ ֆարոգեց Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան:

ԴՂ. 24 Ապրիլ.- 87րդ Տարեդարձ Ապրիլեան եղեռնի: Նահատակաց յիշատակին հանդիսաւոր Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յակոբ Աւագ Սեղանին վրայ: Ժամարարն էր Տ. Աւետիս Արդ. Իփրանեան: «Հայր Մեր»էն առաջ ֆարոգեց Տ. Արիս Եպս. Շիրվանեան: Մեր բիրաւոր նահատակներուն համար կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն:

Ապա կազմուեցաւ երկարածիգ թափօր Զ. Ե. Միութեան եւ Զ. Մ. Ը. Միութեան սկաւուտ-արեւոյշներէ, Ս. Յակոբեանց Միաբանութեան անդամներէ եւ հայ հասարակութենէ: Բազմաթիւ պատանոներու եւ ծաղկեպսակներու շարանով, թափօրը յառաջացաւ դէպի Ս. Փրկիչ ազգային գերեզմանատունը, հանգստեան շարականներու երգեցողութեամբ, Արարայի նահատակաց Յուշարձանին շուրջ հաւաքուած: Յուշարձանին ոտին գետեղուած էին ազգային զանազան կազմակերպութիւններէ եկած ծաղկեպսակներ: Երուսաղէմի Հայ Բարեփրական Միութեան անունով խօսք առաւ Տիար Արամ Խաչատուրեան:

Նոյն երեկոյին, ժառանգաւորաց Վարժարանի սրահին մէջ տեղի ունեցաւ եղեռնի յիշատակին սգահանդէս, յարգանքի խօսքերով, երգով եւ արտասանութեամբ: Դիւանոր քանակիսն էր ժառ. Վարժարանի

դաստիարակներէն Բրոֆ. Գէորգ Բաղդիշեան:

ԵՂ. 25 Ապրիլ.- Իրիկուան հսկումին ի Ս. Յակոբ հանդիսապետեց Տ. Աւետիս Արդ. Իփրանեան:

Շր. 27 Ապրիլ.- Յիշատակ Յարութեան Ղազարու: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Դիւանոր: Ժամարարն էր Տ. Ներսէս Քինյ. Դոստեան:

- Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար ուր մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութիւն եւ նախատօնակ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Կիր. 28 Ապրիլ.- Ծաղկազարդ: Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութեան մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Վիգէն Եպս. Այգազեան: Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Ս. Յարութեան Տաճարէն ներս երկրորդ մուտքէն յետոյ, մեր վերնամատրան մէջ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Տ. Դուսան Վրդ. Այնանեան:

Ապա կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին եւ Պատանատեղոյն շուրջ: Թափօրականք ի ձեռնին ունէին ձիթեղեղեղ եւ արմալինեաց ոստեր: Մեր թափօրին կը հետեւէին Դպտոց եւ Ասորւոց թափօրները: Կատարուեցաւ «Անդաստան» նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Վաճճ վերադարձին Հայոց բաղի ոստիկանատան մուտքէն, Միաբանութիւնը եւ դպիրները «Որ զխորհուրդ» շարականը երգելով բարձրացան Պատրիարքարան, Պատրիարք Սրբազան Հօր ներկայացնելով Ծաղկազարդի արմալինեաց ճիւղերէն, գեղեցկօրէն ծաղկազարդուած եւ հիւսուած:

- Կէսօրէ ետք, Մայր Տաճարին մէջ «Դոնրացէ»ի արարողութեան նախագահեց Պատրիարք Սրբազան Հայրը որ կը գտնուէր փակեալ վարագոյրին ետեւը, իսկ Լուսարարապետ Սրբազանը, փակեալ վարագոյրին առջեւը, աղընթեր ունենալով Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան եւ Տ. Էմմանուէլ Արդ. Աթաքանեան:

ՅՈ Ապրիլ.- Աւագ Երեմիայի: Ըստ սովորութեան Ս. Պատարագը մատուցուեցաւ

Ս. Յարութեան Տանարի գաւթի Ս. Յովհաննէս Աւետարանչի մատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան: Ժամարարն էր Տ. Նորայր Արդ. Գազազեան: Ս. Թարգմանչաց երկ. Վարժարանի աշակերտութիւնը ընդունեց Ս. Հաղորդութիւն: Ապա կատարուեցաւ «Ուխտաւորաց քափօր» Տանարէն ներս:

Թափօրապետն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

Մայիս 2- Աւագ Հինգշաբթի, Յիշատակ Ընթրեաց: Մայր Տանարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարութեան»: Օրուան հանդիսաւոր Ս Պատարագը Մայր Տանարի Աւագ Խորանին վրայ մատուցեց Ս. Սեւան եպս. Ղարիպեան:

Կէսօրէ ետք Մայր Տանարին մէջ պաշտուեցաւ «Ոտնուայ»ի սրտագրաւ կարգը, նախագահութեամբ Լուսարարապետ Սրբազան Հօր:

Ներկայ էին քարձրաստիւնան հիւրեր: Անկլիիքն եպիսկոպոսը վերջաւորութեան շուրջառով եւ խոյր ի գլուխ քարձրացաւ Աւագ խորան եւ Աւետարանէն հատուած մը կարդաց Անգլիերէնով:

- Ժամ մը ետք Տ. Պարէտ Ծ. Վրդ. երեցեանի գլխաւորութեամբ փոքր թափօր մը այցելեց Քրիստոսի գոյգ բանտերը: Ս. Հրեշտակապետաց Վանուց գաւթը, Ս. Զիթենիի ծառը եւ Ս. Փրկչի կիսաւեր մատուոր:

Գիշերուան ժամը 7ին Մայր Տանարին մէջ կատարուեցաւ «Խաւարման կարգը»: «Փառք ի Բարձունս»էն ետք Տանարին խորհրդաւոր մըութեան մէջ «Յայսմաւորք»ի Ամպիոնէն քարոզեց Լուսարարապետ Սրբազանը: Ժամերգութեան աւարտին Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց եւ կատարեց «Խաչի Քո Քրիստոս»ի խնկարկութիւնը:

Մայիս 3- Աւագ Ուրբաթ (Յիշատակ Խաչելութեան): Կէսօրը Բիշ անց, Ս. Յարութեան Տանարի մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ «Կարգ Խաչելութեան»: Հանդիսապետն էր Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

- Կէսօրէ ետք, Մայր Տանարին մէջ կատարուեցաւ հանդիսաւոր «Թաղման Կարգ»ը: Կ. Պոլսոյ Ամեն. Պատրիարք Սրբազան Հայրը, Գեր. Տ. Մեսրոպ Արք. Մութաֆեան, օղակայանէն ժամանելով, նախագահեց արարողութեան:

Մայիս 4- Աւագ Շաբաթ: Զրագալոյց Զատիկ: Առաւօտուն, 9ին, Ս. Յարութեան Տանարի դուռը բացուեցաւ մեր կողմէն,

բանալին առնուելով Աւագ քարգման Տ. Նորայր Արդ. Գազազեանի ձեռքէն: Ժամը 11ին Մեսրոպ Պատրիարք Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութիւն, ուր յաջորդաբար կատարուեցաւ Լուսաւորեայի յարակից հանդիսութիւնները սկսելով Ս. Գերեզմանի կնքումէն:

Յունաց քափօրի վերջաւորութեան, մեր լուսահանը Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան, Յունաց Պատրիարքին հետ մտաւ Ս. Գերեզման: Մեր լուսակիրներու կողմէ լոյսը փոխանցուեցաւ մեր վերնամատրան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Պատրիարք Սրբազան Հօր, ուր լուցեալ մոմերու փունջով օրհնեց խուռներամ բազմութիւնը:

Ապա կատարուեցաւ եռադարձ քափօր: Թափօրապետն էր, մեր լուսահան Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան: Մեր քափօրին կը հետեւէին Ղպտոց եւ Ասորոց քափօրները:

- Վանք դարձին, Դարի բերդին առջեւ, քափօր կազմած, Լուսահան Հայր Սուրբը շուրջառով եւ ապակիէ պահպանակի մէջ Ս. Լոյսը ի ձեռին, Մեսրոպ Պատրիարք Սրբազան Հայրը շուրջառով, խաչ եւ գաւազանով, շարականներու երգեցողութեամբ եւ զանգակահարութեամբ մտան Մայր Տանար:

Պատրիարք Սրբազան Հայրը, Մայր Տանարի դասին մէջ կարդաց Ս. Զատկուայ Աւետարանը եւ Պահպանիչով արձակեց ժողովուրդը, աւետելով «Քրիստոս յարեալ ի մեռելոց»: Ժամ մը ետք, կատարուեցաւ Զրագալոյցի արարողութիւն: Ժամարարն էր Տ. Թէոդորոս Արդ. Զաւարեան: Ս. Պատարագի աւարտին կատարուեցաւ նախատօնակ, նախագահութեամբ Թորգոմ Պատրիարք Սրբազան Հօր:

Կիր. 5 Մայիս.- Զատիկ Յարութեան Տեառն: Կէս գիշերը երկու ժամ անց Մայրավանքի մեծ զանգը ոտի հանեց Միաբանութիւնը, որ Արիս եպս. Շիրվանեանի գլխաւորութեամբ մեկնեցաւ Ս. Յարութեան Տանար:

Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուցեց եւ քարոզեց Լուսարարապետ Սրբազան Հայրը:

- Կէսօրէ ետք Թորգոմ Պատրիարք Սրբազան Հայրը նախագահեց Մայրավանքի մեծ բակին մէջ կատարուած Զատկական հանդիսաւոր «Անդաստան»ին:

Բշ. 6 Մայիս.- Բ. Օր Ս. Զատիկ.- Յիշատակ Մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Մայր Տանարի Աւագ Խորանին

վրայ մատուցելու փորձերը Ամեն. Մեսրոպ Պատրիարքը: Սպասարկողներն էին Տ. Թեոդորոս Արք. Զաֆարեան եւ Տ. Էմմանուէլ Արք. Աթաշանեան: Իսկ բուրվառակիրներն էին Տ. Նորայր Արք. Գազազեան եւ Տ. Իսահակ Արք. Մինասեան:

Ս. Պատարագի վերջաւորութեան Մեսրոպ Պատրիարք Սրբազան Հայրը ամպիովանիի ներքեւ, Ս. Խաչափայտի մասունքն է ձեռնին, Միաբան Հայրեր մասունքներով, դարձան եռադարձ թափօր, որմէ ետք Միաբանութիւնը եւ ժողովուրդը «Այսօր յարեաւ» շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան: Զոյգ Պատրիարք Սրբազան Հայրերը ժողովուրդին նշխարի բաժնեցին:

Դժ. 7 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Սահակ Արք. Մաշալեան:

Շր. 11 Մայիս.- Յիշատակ Գլխատման Սրբոյն Յովհաննու Կարապետին: Ի Ս. Գլխադիր Ս. Պատարագ չը մատուցուեցաւ: Միաբանութիւն եւ ժառանգաւոր աշակերտներ, Բեթղեհէմ մեկնեցան, Ս. Ծննդեան Տաճարի աւերումներուն մաքրութիւնը կատարելու համար, քանի որ հինգ շաբաթներէ ի վեր պատերազմական վիճակ յայտարարուած էր եւ Իսրայէլեան բանակը շրջափակած էր Բեթղեհէմ քաղաքը եւ Ծննդեան Տաճարի մէջ ապաստանած 250 Պաղեստինցիներ: Հայ, Յոյն եւ Ֆրանսիական Միաբանութեանց անդամները, շրջափակումը վերացուած ըլլալով, Ծննդեան Տաճար մտան, եւ մաքրութենէն յետոյ «Պղծեալ Խորանի» արարողութիւն կատարելով, ամէնօրեայ պաշտամունքներուն սկսան:

Շր. 12 Մայիս.- Նոր Կիւրակէ (Կրկնազատիկ): Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ պատարագեց Տ. Սամուէլ Ծ. Վրդ. Աղոյեան:

Շր. 18 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Համբարձում Վրդ. Քէշիշեան:

- Կէսօրէ ետք Լուսարարապետ Սրբազան Հօր գլխաւորութեամբ Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, եւ մեր վերնամատրան մէջ պաշտուեցաւ ժամերգութիւնն ու նախատօնակը:

Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս: Թափօրապետն էր Տ. Գուսան Վրդ. Ալեանեան:

Կիր. 19 Մայիս.- Աշխարհամատրան (Կանաչ Կիւրակէ): Դիշերային եւ Առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Լուսարարապետ Սրբազան Հօր եւ Միաբանութեան երկրորդ մուտքէն ետք, օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ մատուց Տ. Արիս Եպս. Շիրվանեան:

Շր. 25 Մայիս.- Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Գլխադիր: Ժամարարն էր Տ. Բագրատ Արք. Պուրնէֆեան:

Կիր. 26 Մայիս.- Կարմիր Կիւրակէ: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ: Հանդիսապետն էր Լուսարարապետ Սրբազանը: Ժամարարը եւ փորձիչն էր Տ. Էմմանուէլ Արք. Աթաշանեան:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

Բշ. 11 Մարտ 2002.- Թողաղանի վանքի Ապտալահ Բ. Թագաւորին հրաւերով, 250 Քրիստոնեայ եւ իսլամ կրօնապետներ եւ հրաւիրեալներ «Խաղաղութեան եւ Համակցութեան» համագումարի մը մասնակցեցան, Ամմանի պալատական հանդիսասրահին մէջ:

Կիրակի, Մարտ 10ին, Պատրիարք Սրբազան Հայրը Պատրիարքարանի ինքնաշարժով Ամման մեկնեցաւ յետ միջօրէին, տեսակցութիւն ունեցաւ Պատրիարքի Փոխանորդ Տ. Վահան Արք. Թօփալեանի, Տ. Զաքարիա Քիմյ. Սարիբէկեանի, Տեղական Ազգ. Խորհուրդի Ատենադպիր Պր. Ներսէս Ներսէսեանի հետ, եւ յաջորդ, առաւօտ Վահան Սրբազանին հետ մասնակցեցան համագումարին, հանդիսասրահին մուտքին կրօնապետներու հետ դիմաւորելով Վանք. Ապտալահ Բ. Թագաւորին ժամանումը:

Յայտագրին Ա. մասին վերջաւորութեան Վանք. Թագաւորը շնչոնց կարեւորութիւնը «կրօնքին» ժողովուրդներու խաղաղ համակցութեան եւ գործակցութեան համար, եւ քաղաքացիացիներու գնահատեց համագումարին առաջադրամքները այս ուղղութեամբ, եւ հրաժեշտ առաւ երկրէն դուրս ժամադրութեան մը նամրորդութեան պատճառաւ:

Համագումարը շարունակուեցաւ մինչեւ յետ միջօրէի ժամը 3, որուն աւարտին, Արար Օրբոտոֆս Ակումբի մէջ ճաշի հիւրասիրութեան յետոյ, Պատրիարք Սրբազան Հայրը ինքնաշարժով վերադարձաւ Երուսաղէմ:

Եշ. 14 Մարտ.- Մասնաւորաբար ժառանգաւորաց սաներու համար տօն հանդիսացող «Վարդանանց» յայտագիրը սկսաւ Միաբանական ընթրիքով, որ տեղի ունեցաւ Վարժարանիս ճաշարանին մէջ, մախաբահութեամբ Պատրիարք Սրբազան Հօր:

Ընթրիքէն անմիջապէս ետքը, երեկոյեան ժամը 7:30ին, յայտագրի երկրորդ հիմնական մասը շարունակուեցաւ ժառանգաւորաց Վարժարանի մեծ սրահէն մերս, քաղմութեան մերկայութեամբ:

«Սիրտ ի սիրտ» ժառանգաւորաց քայլերգէն եւ «Մեր Հայրենիք» օրհներգէն վերջ, ժառանգաւորաց Վարժարանի Տեսուչ Տ. Պարէտ Ծ. Վրդ. Երեցեան քաղման խօսքով ողջունեց մերկաները:

Օրումն քանախօսմ էր քանասիրական գիտութիւններու տօք. Սուրէն Արարահաման, Հայաստանէն ժամանած ճեմարանի Դրականութեան եւ Հայոց Լեզուի ուսուցիչ:

Քանասիրական եւ գիտական մօտեցումով հրամցուած միւր տեսեց գրեթէ կէս ժամ, որմէ ետք ժառանգաւոր սաները հանդէս եկան «Վարդանանց» շունչով երգուող երգերու շարանով, ղեկավարութեամբ Տէր եւ Տիկին Վալերի Փիրումեանի:

Պատրիարք Սրբազան Հայրը գոհունակութեամբ արտայայտուեցաւ գործադրուած յայտագրին համար եւ «Հայր Մեր» ի խմբական երգեցողութեամբ արձակեց մերկաները:

Ուր. 22 Մարտ.- Կէսօրէ առաջ, Երուսաղէմ «Սիւն» պանդոկի մէջ, Պատրիարք Սրբազանը Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի, մասնակցեցաւ «Աղէք-սանդրիոյ Խաղաղութեան Խորհրդակցութեան» յանձնախումբի անդամներուն հետ գաղափարներու փոխանակութեան, ընդմէջ Հրեայ, իսլամ եւ Քրիստոնեայ մերկայացուցիչներու: Կէսօրէ ետք, Նօթր Տամի մէջ կայացած հիւրասիրութեան մերկայ գտնուեցան Տ. Արիս Եպս. Շիրվանեան եւ Տ. Իսահակ Արք. Միմասեան:

Կիր. 24 Մարտ.- Երուսաղէմի Յունական Ընդհանուր Հիւպատոս Պետրոս Պանայոթոպոլոսին հրաւերով, “Ambassador” պանդոկին մէջ, Յունաստանի ազգային օրումն առիթով կազմակերպուած հիւրասիրութեան մերկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տ. Իսահակ Արք. Միմասեանի:

Բշ. 25 Մարտ.- Յունաստանի Լիազօր Դեսպան Պանայոթիս Լոքրաֆոսին հրաւերով, Հերցելիոյ դեսպանատան քակին մէջ, Յունաստանի ազգային օրումն առիթով կազմակերպուած հիւրասիրութեան մերկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տ. Իսահակ Արք. Միմասեանի:

Գշ. 26 Մարտ.- Հրէից Պատէփ աղթի Հին Քաղաքին Ոստիկանատան մէջ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն, որուն կը մասնակցէին Երուսաղէմի եւ շրջակայ տարբեր մայրամասներու եւ յարանաւանութեանց մերկայացուցիչներ եւ համայնքապետներ (մուկ-կար): Հիւրասիրութեան մերկայ գտնուեցան

Տ. Արիս Եպս. Շիրվանեան, Տ. Իսահակ Արդ. Միմասեան եւ Հայոց Մուխթար Կարապետ Յակոբեան:

Գշ. 2 Ապրիլ.- Զատկուան տօնին առիթով շնորհաւորանքի համար, Պատրիարք Սրբազան Հայրը Միաբանութեան ընկերակցութեամբ այցելեց Ֆրանչիսկեաններուն եւ ապա Լատինաց Պատրիարքարան, ուր ըստ մախապէս եղած համաձայնութեան մերկայ էին մնացեալ յարաւորութեանց մերկայացուցիչներ:

Ժամը 11ին Պատրիարք Սրբազան Հայրը ընկերակցութեամբ Տ. Իսահակ Արդ. Միմասեանի, Զատկուայ շնորհաւորութեան գնաց Պապական Նուիրակին:

Կիր. 7 Ապրիլ.- Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Կալուածոց Տեսուչ Տ. Բագրատ Արդ. Պուրնէֆեանի, Հայֆայի Հովիւ Տ. Ընծանուէր Արդ. Բարախանեանի եւ ճարտարապետ Խաչիկ Դանիէլեանի հանդիպում ունեցաւ Հայֆայի քաղաքապետին հետ, վտանգուած մեր եկեղեցւոյ հարցով: Եկեղեցի, դպրոց, հովուատուն ունենալու մեր կարիքը մերկայացուցաւ, ուրիշ տրամադրելի հոգամաս մը խնդրելով: Հետապնդել պէտք է:

Ուր. 12 Ապրիլ.- Միացեալ Նահանգաց մախագահ Պուշի անունով Պետական Քարտուղար Գօլին Փաուել, Իսրայէլի եւ Պաղեստինի քաղաքական տագնապին առիթով

Երուսաղէմ այցելեց: Քրիստոնեայ կրօնապետներ, Ամերիկեան Հիւպատոսարանի մէջ հանդիպում ունեցան եւ իրենց մտահոգութիւնները յայտնեցին ստեղծուած պատերազմական կացութեան մասին:

Դշ. 17 Ապրիլ.- Իսրայէլի անկախութեան օրուան առիթով, Երուսաղէմի քաղաքապետ Էհուտ Օլմէրթի հրաւերով, տրուած հիւրասիրութեան մերկայ գտնուեցաւ Պատրիարք Սրբազան Հայրը, ընկերակցութեամբ Տ. Արիս Եպս. Շիրվանեանի եւ Տ. Սեւան Եպս. Ղարիպեանի: Այնուհետեւ, մախագահ Մօշէ Քացաւի հրաւերով մասնակցեցան մախագահական ապարանքի շրջափակին մէջ տրուած ընդունելութեան:

Շր. 20 Ապրիլ.- Հայ Կաթողիկէ եկեղեցւոյ Երուսաղէմի եւ Ամմանի Փոխանորդ (էգարք) Տ. Գեորգ Եպս. Խազումեանի գահակալութեան առթիւ, Ցաւագին Տիրամօր եկեղեցւոյ մէջ պատարագին մերկայ գտնուեցան Տ. Արիս Եպս. Շիրվանեան եւ Տ. Նորայր Արդ. Գազագեան:

Եշ. 25 Ապրիլ.- Միացեալ Նահանգաց եկեղեցիներու Ազգային Խորհուրդի կողմէ յանձնախումբ մը, որուն մաս կը կազմէր Արեւելեան Թեմի Առաջնորդի Պատուիրակ Տ. Վիգէն Եպս. Այֆագեան, Պատրիարք Սրբազան Հօր հետ տեսակցութիւն ունեցաւ, անդրադառնալով Ս. Երկրին մէջ տիրող մերկայ քաղաքական կացութեան: